ծանք ձիանը, խարազանի հարուածմը ևս տալով՝ առաջ վարեցինք, անցանք Ղըզըլներ փոքրիկ բլրակէն, սկսանք առնկող շարունակել ճանապարհնիս, հասանք Վարդնակոլեր ճահճային վայրը, ասոի մի ժամ շարունակելով ժաժեր սարի ստորոտէն, Թիկոզ մեծ քարի կշտէն,

Վարդնակոլերէն երկու ճանապարհ կը բաժանուի, մին ի հիւսիս Ինկլիճէ ուսոի մէկ ժամ արևելս ի Ղարա վանք կը տանի. մենք արդեն բռնած ենք վերին ճանապարհը՝ Թիկոզ ժայռի կուշտն քերելով անցանք 1/4 ժամ, ապա խոնարհեցանք ի վայր՝ անցնելով մի մեծ ժայռի երկու ճեղքերու միջէն, շարունակեցինք մեր ճանապարհն 1/4 ժամ ի խոնարհ և մէկ ժամ ևս առնկող մինչև Ղարավանք (սեաւ վանք) հայ գիւղն, մեզ ցմիշտ տեսարան ունենալով Կաղզուանայ և Վիշապաձորի միջավայրը, այսինքն մեզմէ ի հիւսիս մինչև Երասխ տարածուած վայրն։

Ղարավանք բարձր դիրքի մի վերայ 70—80 տնուոր հայ գիւղ մի է, ունի երկու եկեղեցի, մին բարձր դիրքի մի վերայ հինաւուրց մնացեալ վանք մի է, հոյակապ շինուած. տեղ տեղ քանդուած, միւսն նոր շինուած է վանքի մօտը։ Հինը վանք՝ նորը եկեղեցի կը յորջորջուի։

Այս տեղ կայ Ղազախներու փօշտ և մաքսատուն, ժողովուրդն ունի բաւականին վարելահող և բարւոք վիճակ։ Գիւղիս շուրջն պարիսպներու և հին գերեզմաններու բեկորներ կը տեսնուին։

Դարձեալ շարունակեցինք գնալ արևելեան հիւսիս, երկու ժամ միջոց ունինք Կաղզուան հասնելու, գիւղէս 1/2 ժամ խոնարհեցանք, 1 1/2 ժամ անցանք քարքարուտ ճանապարհներէ, մերձեցանք Կաղզուանայ,